ԱԶԱՏ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՏՈՒ ՍՏԵՂԾՄԱՆ ՓՈՒԼԵՐԸ ԵՎ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԱՅԻՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ

ԳՈՄՑՅԱՆ Ա. Դ.

Ազատ տնտեսական գոտու (ԱՏԳ) ստեղծումը ցանկացած տարածաշրջանի սոցիալ-տնտեսական զարգացման ռազմավարական բաղկացուցիչ տարրն է, որը պետության նյութական և ոչ նյութական ոլորտների կառուցվածքի վերափոխումների կարգավորման կարևոր լծակ է: Այդ պատճառով, ԱՏԳ ստեղծման ռազմավարական պլանավորումը հատուկ գործիք է երկրի տնտեսության զարգացման, անհրաժեշտ ենթակառուցվածքների ձևավորման, գործազրկության կրճատման, տնտեսական անվտանգության ապահովման և այլ բարենպաստ, այդ թվում՝ ներդրումային, պայմանների ապահովման համար:

ԱՏԳ ստեղծման հայեցակարգը մշակելիս կիրառվում են տարբեր մոտեցումներ և տեսակետներ, որոնք երբեմն հիմնովին տարբերվում են: Ընդհանրացնելով ԱՏԳ ստեղծման միջազգային փորձը՝ մենք հիմնվում ենք հետևյալ հայեցակարգային հիմունքների վրա (որոնք, կարծում ենք, կարելի է կիրառել նաև Հայաստանի Հանրապետությունում).

1. ԱՏԳ պետք է ստեղծել առավելապես գործող, այդ թվում՝ տեխնիկապես ապահովված արդյունաբերական ձեռնարկությունների հիման վրա, 2. ԱՏԳ ստեղծելու դեպքում հարկավոր է ընտրել տվյալ երկրում ոչ մեծ և միջին տարածքներ ու տարածաշրջաններ՝ նշված տարածաշրջանի համեմատական առավելությունների գործուն օգտագործման նպատակով, 3. արտադրություն կազմակերպելու և արտադրանքը արտահանելու նպատակով տարածք ներմուծել առանց մաքսավճարի հումք, կիսաֆաբրիկատներ, մեքենաներ և սարքավորումներ, ինչպես նաև վերամշակել ու պահեստավորել տարանցիկ բեռներն առանց մաքսավճարի, 4. գոտուց արտահանման համար կիրառել մաքսային դրույքի զեղչեր, 5. թույլ տալ արտասահմանյան կազմակերպությունների արտադրանքի՝ առանց լիցենզիայի արտահանումը և դրա ներմուծումն անձնական կարիքների համար, 6. ապահովել կայուն փոխանակվող արտարժույթի ազատ շրջանառությունն ընդհանուր ազատ միջպետական ֆինանսական տրանսակցիաների պայմաններում, 7. արտասահմանյան սեփականությանը տրամադրել երաշխիքներ, իսկ ԱՏԳ-ի գործող կազմակերպություններին՝ լայն ծավալի արտոնություններ ու առավելություններ:

Լեհաստանի, Հունգարիայի և մի շարք այլ երկրների փորձը թույլ է տալիս եզրակացնելու, որ ԱՏԳ-ի խելամիտ կիրառման, մեխանիզմի աշխատանքը խորությամբ հասկանալու դեպքում այն ի վիճակի է երկրի տնտեսությունը հասցնել ավելի բարձր որակական մակարդակի: Բացի այդ, նշված երկրների փորձը լավ օրինակ է Հայաստանի Հանրապետությունում ԱՏԳ ստեղծելու համար:

ԱՏԳ-ի ստեղծման գործընթացը պահանջում է բոլոր բաղկացուցիչ տարրերի մանրազնին ուսումնասիրություն: Ընդ որում, նպատակների ու խնդիրների

մշակումը պետք է լինի բազմակողմանի և հաշվի առնի բազմաթիվ գործոններ՝ երկրի տնտեսական վիճակը, ներդրումային, հարկային օրենսդրությունների կայունությունը, պետության արտաառևտրային կապերը և այլն: Միայն այդ դեպքում ԱՏԳ-ի գործունեությունը կգնահատվի արդյունավետ:

ԱՏԳ-ի հանգուցահարցերի մշակման միջազգային փորձը թույլ է տալիս արձանագրելու, որ ընդհանուր տեսքով ԱՏԳ-ի ստեղծման ամբողջ նախագիծն ընդգրկում է չորս հիմնական շրջան՝ նախաներդրումային, ներդրումային, բուն գործունեության, գործարքային և զարգացման:

Նախաներդրումային շրջանը (տևողությունը մինչև 1 տարի) բաղկացած է երկու փուլից: Առաջին՝ նախապես հետազոտել տնտեսաաշխարհագրական, մարկետինգային, տնտեսաֆինանսական և այլ ոլորտները: Այս փուլի նպատակներն են՝ ուսումնասիրել տարածաշրջանում ԱՏԳ-ի հայեցակարգային հնարավորությունները, ընտրել գոտու տարածքը, աշխարհագրական դիրքը և այլն: Բացի այդ, էական է տվյալ գոտում հետագայում առաջադրվող մասնագիտացման և ծառայությունների ճյուղերը մանրամասն հստակեցնելը: Հատկապես այս փուլում ձեռք բերված տեղեկությունների հիման վրա կարելի է ընդհանուր որոշում ընդունել ԱՏԳ-ի կոնկրետ ստեղծման համար:

Նախաներդրումային շրջանի երկրորդ փուլը, հիմնվելով տնտեսական և ֆինանսական հաշվարկների վրա, նախատեսում է ճշգրտել առաջին փուլի տվյալները: Անհրաժեշտ է հատուկ ուշադրություն դարձնել հատկապես կապիտալ ներդրումների արդյունավետության հաշվարկի վրա: Ընդ որում, հարկ է որոշել ներմուծումների ընդհանուր ծավալը, այն բաշխել ենթակառուցվածքի և արդյունաբերական շինարարության միջև: Այդուհանդերձ, կարևոր է հստակեցնել այդ միջոցների աղբյուրները: Դրանք կարող են լինել կենտրոնացված կապիտալ ներդրումներ, տարածքի սեփական և ձեռնարկությունների, բանկերի փոխառության միջոցներ, տեղական արժեթղթերի վաճառքից ստացված գումարներ և այլն: Այս փուլում ցանկալի է ընդհանուր տեսքով որոշել տարածքի զարգացմանը հատկացված արտարժույթի փայաբաժինները: Այս փուլում խիստ կարևոր են բանակցային գործընթացներ վարելը, տարածքային, աշխարհաքաղաքական առումով տնտեսությունն արդյունավետ կազմակերպելու պայմանները որոշելու համար հետևողական և վերլուծական աշխատանք կատարելը:

Ներդրումային շրջանը մեկ տարի տևողությամբ կարելի է անցկացնել նախաներդրումայինի հետ զուգահեռ: Այն նույնպես ընդգրկում է երկու փուլ: Առաջինը կարելի է պայմանականորեն անվանել «բանակցային»: Այդ դեպքում հարկ է տեղական և կենտրոնական իշխանությունների հետ պայմանավորվածություն ձեռք բերել գոտու սահմանների և մասնագիտացման տեղադիրքի վերաբերյալ, նախագծի իրականացման մեջ որոշել իշխանությունների մասնակցության չափը: Անհրաժեշտ է զուգահեռաբար մշակել գոտու ենթակառուցվածքի ձևավորման տեխնիկական նախագիծը:

Ներդրումային շրջանի երկրորդ փուլը նախատեսում է ստեղծել ենթակառուցվածքի կոնկրետ օբյեկտներ՝ էներգետիկ, տեղեկատվական, տրանսպորտային, հաղորդակցային և այլ ցանցեր, տարբեր տեսակի շենքեր (պահեստներ,

գրասենյակներ, արտադրական տարածքներ): Դրանք կարող են կամ կառուցվել, կամ էլ՝ հները վերանորոգվել: Շինարարական աշխատանքներին զուգահեռ, այս փուլում պետք է իրականացնել մեծածավալ գովազդային և մարկետինգային միջոցառումներ՝ հնարավոր ներդրողներին ներգրավելու համար: Ընդ որում, ձևավորման սկզբնական շրջանից արդեն, պետք է լինեն մի շարք պոտենցիալ ներդրողներ, որոնք պատրաստ են գոտում սկսել իրենց արդյունաբերատնտեսական գործունեությունը:

Գործարքային շրջանը պլանավորման ամենածանր գործընթացն է, քանի որ կախված է թե՛ ինքնազարգացող համակարգի գոտու ներքին դինամիկայից, և թե՛ երկրի ու գոտու տարածաշրջանում քաղաքական կայունությունից: Միաժամանակ, գոտու զարգացման համար անհրաժեշտ է լայնորեն օգտագործել մարկետինգային հետազոտությունների արդյունքները: Այս շրջանը նույնպես կարելի է բաժանել երկու՝ մեկնարկային և գոտու ինքնազարգացման փուլերի: Երկուսում էլ գոտու ֆիզիկական ներուժն օգտագործվում է ոչ լիովին: Ներուժի լիակատար օգտագործման դեպքում այդ գոտին պետք է վերաճի ավելի մեծ արդյունաբերական շրջանի կամ ընդգրկի նոր ոլորտներ ու արտադրություններ, կամ էլ փոխի իր կարգավիճակը: Ամեն դեպքում դա նշանակում է գոտու կյանքի տևողության չորրորդ՝ զարգացման շրջանի սկիզբը:

Գործարքային շրջանի մեկնարկայինն ինքնազարգացման փուլից տարբերվում է, քանի որ փոխում է ներդրումների դրդապատճառների համակարգը: Առաջին դեպքում ներդրողները գոտի են գալիս անմիջական առավելությունների և ծառայությունների պատճառով, որոնք կարող են այստեղ ստանալ (ներառյալ աշխատուժի, հումքի արժեքը, ամբողջ երկրի միջազգային շուկա մուտքը, պատրաստի տարածքները և այլն): Այս փուլում շատ կարևոր է որոշել հողի և բնական այլ ռեսուրսների օգտագործումը՝ հաշվի առնելով դրանց որակը, պատկանելությունը և օտարման կարգը, որն ընդունված է պետության գործող օրենսդրությամբ: Երկրորդ փուլում ներդրողներին արդեն հրապուրում է գոտում և դրա շուրջ իրականացվող արտադրատնտեսական գործունեությունը: Այստեղ գործում է հետագա զարգացման օրենքը, որը հենվում է փոխազդեցության և լրացումների սկզբունքի վրա:

Առաջադրվող հանգուցահարցը նպատակահարմար է հետազոտել հետևալ հատվածներով: Առաջին՝ նկարագրել ԱՏԳ-ի ձևերը, որոնք կարելի է ստեղծել և թույլատրել Հայաստանի տարածքում: Այս հատվածի համար հարկ է օգտագործել ազատ գոտիների դասակարգումը՝ վերլուծելով դրանց առավելությունները և թերությունները: Երկրորդ՝ նկարագրել ԱՏԳ-ի ընդհանուր սկզբունքները, որոնց վրա ձևավորվում է ԱՏԳ-ի զեղչերի համակարգը: Բացի այդ, անհրաժեշտ է լուծել այս կամ այն ազատ գոտու առջև դրված գործառական խնդիրները, որոնք կարևոր են ներդրողների գործունեության համար: Միաժամանակ, պետք է առանձնացնել և հստակեցնել հարկային, մաքսային, ֆինանսական և վարչական արտոնությունները: Այս հատվածում նույնպես հարկ է հաշվի առնել ներդրողների

առանձնահատկությունները: Երրորդ՝ ԱՏԳ-ի կառավարման համակարգը պետք է բավարարի առաջադրվող պահանջները:

Գոտու արդյունավետ կառավարման համար նպատակահարմար է ստեղծել հատուկ վարչական համակարգ, որը չպետք է գտնվի ճյուղային նախարարությունների և հանրապետական այլ տնտեսական ղեկավարման մարմինների ենթակայության տակ: Դա թույլ կտա գոտիներում զգալիորեն պարզեցնել արտասահմանյան մասնակցությամբ կազմակերպությունների գրանցման ընթացակարգը, ինչպես նաև հեշտությամբ լուծել դրանց գործառական խնդիրները (մատակարարման, անձնակազմի հավաքագրման, ապահովագրման հարցերը և այլն): Միաժամանակ, հանրապետական մակարդակով նպատակահարմար է ստեղծել հատուկ մարմին, որն ի վիճակի կլինի կոորդինացնել և հսկել առանձին գոտիների զարգացման գործընթացը: Ընդ որում, այդ կառույցին անհրաժեշտ է տրամադրել կենտրոնական և տարածաշրջանային գերատեսչությունների համապատասխան իրավասություններ: Չորրորդ՝ գնահատել ԱՏԳ-ի գործունեության արդյունավետությունը: Գոտիների ստեղծման առջև դրված խնդիրների համակարգը նախատեսում է դրանց արդյունավետության վերլուծության համալիր մոտեցում: Որպես կանոն, ԱՏԳ-ի մակրոտնտեսական արդյունքները ուղղակի (մի կողմից, մաքուր եկամուտների հարաբերակցությունն արտահանման մուտքերի աճին, զբաղվածությանը, ներգրավված ներդրումների ծավալներին, մյուս կողմից, ենթակառուցվածքի շինարարության վրա ընդունող կողմի ծախսերին) և անուղղակի են (գոտիների ազդեցությունն ազգային տնտեսության վրա՝ տեխնոլոգիաների փոխանցման միջոցով, կապերի հաստատումն ազգային միջնորդ ձեռնարկությունների հետ, աշխատատեղերի ավելացումը և ազգային տնտեսությունում եկամուտների աճը): Արտասահմանյան փորձը վկայում է, որ անգամ ամենահաջող գործի կիրառման դեպքում սկզբում գոտիները վնասաբեր են: Հետագայում, իրադարձությունների բարենպաստ զարգացման դեպքում, արտասահմանյան կապիտալի համագործակցությունից ստացված անմիջական եկամուտները սկսում են հատուցել պետության ծախսերը և թույլ են տալիս ստեղծելու ենթակառուցվածքի անհրաժեշտ օբյեկտներ:

КОНЦЕПТУАЛЬНЫЕ ОСНОВЫ И ЭТАПЫ СОЗДАНИЯ СВОБОДНОЙ ЭКОНОМИЧЕСКОЙ ЗОНЫ

ГОМЦЯН А. Д.

Резюме

Создание свободных экономических зон является важным рычагом регулирования структуры материальных и социальных отраслей государства. Концептуальные основы создания СЭЗ можно использовать и для Республики Армения, с учетом при этом этапности создания СЭЗ (прединвестиционный, инвестиционный, период функционирования, операционный и период развития зон).